

չէ, երբ նկատենք որ Հրեայք ալ ուշ կը դնէին այդ հանգամանքին՝ զոհին տեսակին համեմատ (ԵԼԶ, ԺԲ, 5. ՂԵԼՄ, Ա, 3, 10. Գ, 1, 6): Յոյնք նոյն խտրութիւնը կ'ընէին ըստ պարագային (Գար. Գ, 960): Եւ Յագկերտի՝ ինչպէս նաեւ մեր Խոսրով թագաւորի զոհերն ալ արու էին (աստ, 314): Բայց միջին դարուն այդ զանազանութիւնն այլ եւս չկայ: «Թէ որձ է եւ թէ էգ՝ ոչ է խոտելի», կ'ըսէ Տարօնացին (Թէոփ. 279). եւ Շնորհալին զատկի գառին համար՝ թէ «արու կամ էգ անփոյթ եղեալ» է (Ընդհ. 155):

Սակայն կայ ուրիշ հանգամանք մը՝ որ ամէն ժամանակ պինդ բռնուած է: Այդ չորքոտանիք լինելու էին ընտիր տեսակէն եւ անարատ: «Զգէրն եւ զուղիղն ի հօտից», կ'ըսէ Մանդակունին, մեզի չպահենք, եւ «զանօգուտն եւ զվտիտն» աղքատաց ընդունելութեան չնուիրենք (62): Տաթեւացին նոյնպէս կը պահանջէ «զընտիրն եւ զգէրն» (Հրց. 657): Անպիտանը նուիրողն աստուածային բարկութեան պիտի հանդիպէր (Մանդ. 57-8): Յայտնի է՝ թէ այս զգուշութիւնը խստութեամբ կը պատուիրէր մովսիսական օրէնքն ալ (ՂԵԼՄ, ԻԲ, 19-24):